Հաստատված է
ՄԱԼԻՇԿԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
2014թ-ի ապրիլի 2-ի թիվ 07
կարգադրությամբ կազմավորված
գնահատող հանձնաժողովի
Ապրիլի 2 -ի նիստի թիվ 1 արձանագրությամբ

<<ՄԱԼԻՇԿԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ>>

ՀՐԱՎԵՐ

Շրջանակային համաձայնագրի միջոցով
համակարգչային տեխնիկայի գնման

Ծածկագիր՝ <<ՄԳՊ-ՇՀԱՊՁԲ-11/8>>

Հարգելի մասնակից,

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.11թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված գնման գործընթացին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու գնման գործընթացի պայմանների՝ գնման առարկայի, գնման գործընթացի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու գնման գործընթացի հայտը պատրաստելիս:

1. Գնման առարկայի բնութագիրը

1.1 Գնման առարկա է հանդիսանալու համակարգչային տեխնիկայի ***գնումը***:

1.2 Գնման առարկայի մանրամասն բնութագիրը տես հավելված 1-ում:

2. Հայտը պատրաստելու և ներկայացնելու կարգը

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում հայտ:

2.2 Հայտը սույն հրավերի (ծանուցման) հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

2.3 Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

2.5 Հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ <<Հայտերը պատրաստելու>> հրահանգում:

2.6 Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան՝ 14.04.14թ. ժամը 12:00-ը, գ. Մալիշկա, Մալիշկայի գյուղապետարան հասցեով: Հայտերը ստանում և գնման ընթացակարգի հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Առաքելյանը հեռ. 094.39.85.55: Հայտերը գրանցվում են գրանցամատյանում, ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

2.7 Հայտը ներառում է շրջանակային համաձայնագիր կնքած անձի կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը՝ տես հավելված 2,

բ. գնային առաջարկը՝ տես հավելված 3.

2.8 Հայտը ներկայացվում է փակ, սոսնձված ծրարով, որի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝

ա. «Գնային առաջարկ» բառերը,

բ. ընթացակարգի ծածկագիրը,

գ. «Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը» բառերը,

դ. մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

ե. պատվիրատուի անվանումը (անունը), գտնվելու վայրը.

3. Հայտերի բացումը

3.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի՝ (այսուհետև՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստում՝ 14.04.14թ. ժամը 12:00, գ. Մալիշկա, Մալիշկայի գյուղապետարան հասցեում:

3.2 Հայտերի բացումն իրականացվելու է ՀՀ կառավարության 10.02.11թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3.3 Հայտերի բացման նիստում, որը պետք է համընկնի հրավերով սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին, քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում հայտերի գրանցամատյանում կատարված գրառումների մասին, որից հետո հանձնաժողովը՝

ա. գնահատում է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված ծրարները: Անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում գնահատող հանձնաժողովը մերժում է այդ հայտերը: Քարտուղարը նիստին հաջորդող

երկու աշխատանքային օրվա ընթացքում մերժված հայտերը և նիստի արձանագրության պատճենը տրամադրում է մերժված հայտերը ներկայացրած մասնակիցներին,

բ. հրապարակում է բացված հայտերով ներկայացված գները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

Պահանջի դեպքում հրապարակված գնային առաջարկների պատճեններն անհապաղ տրամադրվում են նման պահանջ ներկայացրած մասնակցին:

Ստուգվում են ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտերում ներառված գնային առաջարկների թվաբանական ճշտությունը: Թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով

- Եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա հիմք է ընդունվում բառային արտահայտությունը,
- եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ, փոխելով ապրանքի համար առաջարկված ընդհանուր գինը,
- եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի տասնորդական գրառման մեջ ստորակետի ոչ ճիշտ տեղում դնելու կամ սխալ կլորացման արդյունք է, ապա ճշտումը կատարվում է տվյալ ապրանքի համար առաջարկված ընդհանուր գնի պահպանմամբ՝ ճշտելով միավորի գինը,
- Գնահատող հանձնաժողովը կատարված ուղղումների արդյունքների մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալուպահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը ճշգրտված գնային առաջարկի մասին, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

3.4 Հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները: Հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

3.5 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ապա՝

ա. Առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում՝ առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելեու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները.

3.6 Հայտերի բացման նիստի ավարտից հետ հանձնաժողովի քարտուղարը կազմում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները:

4. Պայմանագրի կնքումը

4.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

4.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

*4.*3 Ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում պետք է ներկայացնի պայմանագրի ապահովումը(հավելված4): Եթե նշված ժամկետում պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովում և 5 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը չի ստորագրում, ապա ընտրված մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

4.4 Մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի *www.gnumner.am*:

Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը հինգ օրացուցային օր է:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

5. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

5.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

5.2 Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

5.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

5.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը փոխանցվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

5.5 Գնումների բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացվելու դեպքում մասնակիցը բողոքը ներկայացնում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին, ք. Երևանի Կոմիտասի 54/բ հասցեով: Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն հրավերի I-ին մասի 5.2 կետով սահմանված անգործության ժամանակահատվածում:

5.6 Գնումների բողոքների ներկայացման, քննման և որոշումների կայացման հետ կապված հարաբերությունները սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով:

ՄԱՍ II

ՀՐԱՀԱՆԳ
ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:
1.2 Հայտը, ներառյալ դրանում ներառվող բոլոր փաստաթղթերը, պետք է կազմված լինեն հայերեն:

2. Հայտերի պատրաստման կարգը

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ: Հայտը՝ սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:
2.2 Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված ՝
ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում,
բ. գնային առաջարկ.

Ծանուցում 1.

Հայտը ներկայացվում է փակ՝ սոսնձված ծրարով, որի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝
ա. «Գնային առաջարկ» բառերը,
բ. ընթացակարգի ծածկագիրը,
գ. «Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը» բառերը,
դ. մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը,
ե. պատվիրատուի անվանումը (անունը), գտնվելու վայրը.

Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և 1 օրինակ պատճենից:

Հավելված 1

<< **ՄԳՊ-ՇՀԱՊՁԲ-11/8**>>
ծածկագրով գնման ընթացակարգի
հրավերի

Սարքերի տեխնիկական բնութագիրը

2. **Պարտադիր պայման** է հանդիսանում ապրանքի չօգտագործված լինելը:
3. Մատակարարումը մինչև Մալիշկայի գյուղապետարան /Վայոց Ձորի մարզ/:
4. **Պայմանագրի կատարման** ժամկետ սահմանել պայմանագրի ստորագրման օրվանից սկսած մինչև 31 աշխատանքային օրը:
5. **Երաշխիքային ժամկետ** սահմանել պատվիրատուի կողմից ապրանքը ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:
6. **Վճարումն** իրականացնել պայմանագրով նախատեսված ապրանքը մատակարարելուց հետո՝ երկկողմ ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

Տեխնիկական հատկանիշներ

Չափ-նի համարը	Գնման առարկան	Քանակը	Տեխնիկական հատկանիշներ
1.	Դյուրակիր համակարգիչ	1 հատ	AH512 GL (15.6" LED, I3, 4GB DDR3, 500GB, Video Intel HD, DVD-RW, Webcam, Windows 8.1, mouse wireless,)
2.	Լազերային տպիչ սարք	1 հատ	A4 թղթի տպագրության համար, 1 րոպեում տասնութ էջ, USB երկարացման լարով, Canon կամ համարժեք
3.	Համակարգիչ պլանշետ	1 հատ	Samsung galaxi tab կամ համարժեք
4.	Անխափան սնուցման աղբյուր 12V կամ համարժեք	3 հատ	-սարքի տեսակը-անխափան սնուցման աղբյուր 1500WT - մուտքային լարման տիրույթը (V) - 155 - 290, - ելքային հաստատուն լարում ցանցից սնուցման դեպքում (V) - 13.6V ±0.6, - ելքային հաստատուն լարում մարտկոցից սնուցման դեպքում (V) – 10-13.6. - նոմինալ հոսանք (A) - 3, - մաքսիմալ հոսանք (A) - 4. - աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 10 °C-ից մինչև +40 °C, - մարտկոց 7A/12V (չըսպասարկող կապար-թթվային, սնուցման լարումը -12 V, ունակությունը -7 A/H), - մետաղական կորպուս:

Հավելված 2

<< **ՄԳՊ-ՇՀԱՊՁԲ-11/8**>>
ծածկագրով գնման ընթացակարգի
հրավերի

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____-ի կողմից N_____ ծածկագրով հայտարարված
Պատվիրատուի անվանումը

ընթացակարգի _____ չափաբաժնին (չափաբաժիններին) և
չափաբաժնի (չափաբաժինների)

հրավերի (ծանուցման) պահանաջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1 պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2 համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է,
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

որ չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն, Ազգանունը) (ստորագրություն)

Կ.Տ

<<___>>_____2014 թ

Հավելված 3

<< **ՄԳՊ-ՇՀԱՊՁԲ-11/8** >> *ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի*

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N_____ ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

գների*՝

Չափաբաժինների անվանումների համարները	*Գնման առարկայի անվանումը*	*Արժեք**	*ԱԱՀ***-ն*	*Առաջարկված գինը (տառերով և թվերով)*
N	*2*	*3*	*4*	*5=3+4*
1				

** 3-րդ սյունակում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն, Ազգանունը) (ստորագրություն)

Կ.Տ

<<___>>_____2014թ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

N << ՄԳՊ-ՇՀԱՊՁԲ-11/8>>

գ. Մալիշկա <<……>>……201 թ.

Մալիշկայի գյուղապետարանը , ի դեմս գյուղապետ Մ. Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ **Գնորդ**)՝ մի կողմից և «_____» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն _____ի, (այսուհետև՝ **վաճառող**) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին.

2 Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետում Գնորդին հանձնել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված Անխափան սնուցման աղբյուրների (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1. Վաճառողն ապրանքը հասցնում է գնորդին՝ Վայոց Ձորի մարզ, Մալիշկայի գյուղապետարան:

2.2. Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առավելագույնը 31 աշխատանքային օր, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից Ապրանքը չմատակարարվելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի N1 Հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը:

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունները հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5. Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, քանակով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

<u>4.Ապրանքի գինը և վճարման կարգը</u>

4.1 Սույն Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է _____ *(_____)* ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքատեսակի միավոր գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի Գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները :

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 5 բանկային օրվա ընթացքում՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ

ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը :

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա վաճառողը պարտավոր է իր հաշվին Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այնուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցներրը,

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7 Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի գնի 0.05 %-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 %-ի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 %-ի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների լրիվ կատարումից:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ_ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:
9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:
9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.
1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.
2)Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետևյալ կերպ.

կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների Նախարարության հետ:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռքբերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքների մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.
9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (կատարող և (կամ) պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5Սույն պայմանգրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:
9.6Սույն պայամանգիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1,2,3 և 4 հավելվածները՝ բաղկացած ------էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
9.7 Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
9.8 Սույն Պայմանգրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

«Գնորդ»	***«Վաճառող»***
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված 1

<< **ՄԳՊ-ՇՀԱՊՁԲ-11/8**>>
ծածկագրով գնման ընթացակարգի
հրավերի

Սարքերի տեխնիկական բնութագիրը

2. **Պարտադիր պայման** է հանդիսանում ապրանքի չօգտագործված լինելը:
3. Մատակարարումը մինչև Մալիշկայի գյուղապետարան /Վայոց Ձորի մարզ/:
4. **Պայմանագրի կատարման** ժամկետ սահմանել պայմանագրի ստորագրման օրվանից սկսած մինչև 31 աշխատանքային օրը:
5. **Երաշխիքային ժամկետ** սահմանել պատվիրատուի կողմից ապրանքը ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:
6. **Վճարումն** իրականացնել պայմանագրով նախատեսված ապրանքը մատակարարելուց հետո՝ երկկողմ ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

Տեխնիկական հատկանիշներ

Չափ-նի համարը	Գնման առարկան	Քանակը	Տեխնիկական հատկանիշներ
1.	Դյուրակիր համակարգիչ	1 հատ	AH512 GL (15.6" LED, I3, 4GB DDR3, 500GB, Video Intel HD, DVD-RW, Webcam, Windows 8.1, mouse wireless,)
2.	Լազերային տպիչ սարք	1 հատ	A4 թղթի տպագրության համար, 1 րոպեում տասնութ էջ, USB երկարացման լարով, Canon կամ համարժեք
3.	Համակարգիչ-պլանշետ	1 հատ	Samsung galaxi tab կամ համարժեք
4.	Անխափան սնուցման աղբյուր 12V կամ համարժեք	3 հատ	-սարքի տեսակը-անխափան սնուցման աղբյուր 1500WT - մուտքային լարման տիրույթը (V) - 155 -290, - ելքային հաստատուն լարում ցանցից սնուցման դեպքում (V) - 13.6V ±0.6, - ելքային հաստատուն լարում մարտկոցից սնուցման դեպքում (V) – 10-13.6. - նոմինալ հոսանք (A) - 3, - մաքսիմալ հոսանք (A) - 4. - աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 10 °C-ից մինչև +40 °C, - մարտկոց 7A/12V (չըսպասարկող կապար-թթվային, սնուցման լարումը -12 V, ունակությունը -7 A/H), - մետաղական կորպուս:

«Գնորդ» ***«Վաճառող»***

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
2014 թ.-ի _____ << >>-ի թիվ ------ պայմանագրի

Մալիշկայի գյուղապետարանի
կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման

Գնման-Ժամանակացույց

Չափ-նի N	Գնման առարկայի անվանում	Չափ. միավոր	Միավորի գին ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետ	Ընդամենը	
					քանակ	գին ՀՀ դրամ
1.	Դյուրակիր համակարգիչ	հատ		Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31 աշխատանքային օր	1 հատ	
2.	Լազերային տպիչ սարք	հատ		Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31 աշխատանքային օր	1 հատ	
3.	Համակարգիչ պլանշետ	հատ		Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31 աշխատանքային օր	1 հատ	
4.	Անխափան սնուցման աղբյուր 12V կամ համարժեք	հատ		Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31 աշխատանքային օր	3 հատ	

«Գնորդ» ***«Վաճառող»***

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
2014 թ.-ի _____ << >>-ի թիվ ------ պայմանագրի

Մալիշկայի գյուղապետարանի
կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափ-նի	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Համակարգչայ ին տեխնիկա	-	-	-	100 %	-	-	-	-	-	-	-	-	100 %

Գ ն ո ր դ **Վ ա ճ ա ռ ո ղ**

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 4
201 թ.-ի _____ << >>-ի թիվ ------ պայմանագրի

Գնորդ	Վաճառող
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<__>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ <<_____ >> :

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<__ >> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն, ի դեմս_____ և Կատարողն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում վաճառողը <<__>> <<_____>> 20 թ-ից <<__>> <<_____>> 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները.

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց **Ապրանքը ընդունեց**

Հավելված 4

<< **ՄԳՊ-ՇՀԱՊՁԲ-11/8**>>
ծածկագրով գնման ընթացակարգի
հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N

գ. Մալիշկա <<_____>>_____20 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է Մալիշկայի գյուղապետարանի կողմից (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման N _____ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված ձեռքբերման N _____գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ----------թվերով---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի անվանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ._____-ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>

<<Մասնակցի հասցեն>>

<<Մասնակցի բանկի անվանումը>>

Հ/Հ

ՀՎՀՀ

տնօրեն՝ --------------------------------

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ -----------------------------

(ստորագրություն)

Կ.Տ